# «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-241-Ն օրենքի 249-րդ հոդվածը լրացնել նոր՝ 23.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«23.1. Սույն օրենքի իմաստով դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 184 օր և ավելի բնակված անձը համարվում է Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող ֆիզիկական անձ՝ անկախ Հայաստանի Հանրապետությունում հաշվառում ունենալու հանգամանքից:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2018 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների նկատմամբ: